«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորումը՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի համապատասխան

Դաստիարակ՝ Խանդութ Աթյան

Մանկապարտեզ՝ «Լոռու մարզի Թումանյան համայնքի գյուղ Դսեղի ՆՈՒՀ» ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1. Մանկավարժական աշխատողի ուսումնադաստիարակչական աշխատանքի պլանավորումը՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի պահանջներին համապատասխան 5

1.1 Ուսումնադաստիարակչական գործընթացի իրականացումը մանկապարտեզում կրթության պետական կրթական չափորոշչի պահանջներին համապատասխան 5

1.2 Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված ինը կարողունակությունների և ոլորտների անհրաժեշտությունը 10

1.3 Ուսումնական գործընթացի պլանավորման անհրաժեշտությունը 12

Գլուխ 2. Գործնական աշխատանք 15

2.1 Դաստիարակի աշխատանքի մեկշաբաթյա պլանավորում 15

2.2 Տնօրենի դիտարկումներ 17

Եզրակացություն 18

Օգտագործված գրականության ցանկ 19

Ներածություն

Աշխարհը փոխվում է ավելի արագ, քան երբևէ: Տեխնոլոգիաները, հասարակությունը և շրջակա միջավայրը ենթարկվում են հետաքրքիր վերափոխումների, որոնք ազդում են մեր կյանքի բոլոր ոլորտների վրա: Այս համատեքստում կրթությունը ոչ միայն գիտելիք և հմտություններ ձեռք բերելու միջոց է, այլ նաև փոփոխվող իրողություններին հարմարվելու և ապագային պատրաստվելու միջոց: Մանկավարժները վճռորոշ դեր ունեն ուսումնառությունը հեշտացնելու և իրենց երեխաների շրջանում նորարարության, ստեղծագործականության և ճկունության խթանման գործում: Կրթական գործընթացների հենց առաջին փուլից՝ մանկապարտեզից է սկսվում կյանքին պատրաստելու այս գործընթացը: Ահա թե ինչու անելու համար նրանք պետք է մշտապես թարմացնել մասնագիտական չափանիշներն ու գործելակերպը և համապատասխանեցնել դրանք մի կողմից համակարգի կողմից սահմանված չափորոշիչներին, մյուս կողմից՝ սովորողների և հասարակության զարգացող կարիքներին ու ակնկալիքներին:

Հետազոտության թեմայի արդիականության հիմնավորում. Այս հետազոտության արդիականության հիմքը հանդիսացել է նախադպրոցական մանկավարժի կողմից արդյունավետ պարապունքների պլանավորումն ու անցկացումը՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի պահանջներին համապատասխան: Ըստ կրթական նոր չափորոշչի նախադպրոցական սանը պետք է տիրապետի զարգացման համար անհրաժեշտ բոլոր պահանջներին և պարտադիր կարողունակություններին: Հետևաբար յուրաքանչյուր մանկավարժ ուսումնական պարապունքի պլանավորելիս պետք է ուշադրություն դարձնի և կիրառի կրթության պետական կրթական չափորոշչի պահանջները՝ նշելով վերջնարդյունքները և դրանից բխող նպատակը:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել նախադպրոցական մանկավարժի ուսումնական և դաստիարակչական աշխատանքի պլանավորումն ու կիրառումը՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի պահանջներին համապատասխան:

Հետազոտության ընթացում մեր առջև դրված են եղել հետևյալ խնդիրները՝

- Ուսումնասիրել առկա չափորոշիչները՝ սահմանված մանկապարտեզի մանկավարժի աշխատանքի համար:
- Դիտարկել այն արդյունավետ եղանակներն ու մեթոդները, որոնց միջողով նախադպրոցական ուսումնական հաստատությունում մանկավարժական աշխատողը կարող է պլանավորել և անցկացնել նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի պահանջներին համապատասխան ուսումնական պարապունքներ, հանդեսներ:
- Գնահատել յուրքանչյուր մեթոդի արդյունավետությունը:
- Կազմել թեմատիկ պլանի օրինակ՝ հաշվի առնելով նոր չափորոշիչները:

Հետազոտական աշխատանքը կազմված է ներածությունից, տեսական և գործնական գլուխներից, եզրակացություն, օգտագործված գրականության ցանկ:

Գլուխ 1. Մանկավարժական աշխատողի ուսումնադաստիարակչական աշխատանքի պլանավորումը՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի պահանջներին համապատասխան

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը հանրակրթության պետական կրթական չափորոշչի բաղկացուցիչ մաս կազմող նորմատիվ իրավական ակտ է, որը սահմանում է նախադպրոցական տարիքի երեխաների (ըստ տարիքային խմբերի) զարգացման կրթական ծրագրերի բովանդակությունը, նրանց ներկայացվող վերջնարդյունքները, ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը, նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և զարգացման վերջնարդյունքի ապահովման հիմքերը:[1]

Նախադպրոցական աշխատողը պետք է իմանա կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից սահմանված իր պաշտոնական պարտականություններին և «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավունքներին:

1.1 Ուսումնադաստիարակչական գործընթացի իրականացումը մանկապարտեզում կրթության պետական կրթական չափորոշչի պահանջներին համապատասխան

Դաստիարակին անհրաժեշտ է տիրապետել մանկավարժական առաջադեմ տեխնոլոգիաներին, մեթոդներին, աշխատել համակարգչով, օգտվել համացանցից, ճկուն մտածողություն, հարգել սաների ազատությունը, նախաձեռնող է, ստեղծող-ստեղծագործող: Նախադպրոցական տարիքի երեխաների հետ աշխատող յուրաքանչյուր դաստիարակ պետք է իմանա և կարողանա՝

[1] arlis.am/documentview.aspx?docid=152575 «ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ», Ընդհանուր Դրույթներ, 1.1

1. Երեխաների համար ստեղծել և պահպանել անվտանգ, առողջ և զարգացնող ֆիզիկական և սոցիալական միջավայր, որտեղ երեխան կարող է բավարարել իր հետաքրքրությունները և պահանջմունքները: Ծնողական համայնքի հետ և երեխաների ստեղծած նյութերով պետք է հարստացնի և բազմազան դարձնի միջավայրը:

2. Կազմել և իրականացնել երեխաների զարգացումը խթանող ուսումնական պլան, որը ներառում է երեխաների ուսումնառությունը և զարգացման բոլոր ոլորտները:

3. Երեխայի հետ հաստատել համագործակցային հարաբերություններ և կիրառել զարգացմանը նպաստող մեթոդներ:

4. Ընտանիքի հետ ստեղծել և պահպանել դրական և արդյունավետ հարաբերություններ:

5. Հաշվի առնելել երեխայի ընտանեկան մշակույթը՝ նպաստելով նրա զարգացմանն ու ուսումնառությանը:

6. Դիտարկել երեխայի գործունեությունը, եզրահանգումներ անել և դրան համապատասխան ուղղորդել երեխայի գործունեությունը՝ հավաքած տեղեկությունները օգտագործելով ուսումնական գործընթացի և ծրագրի պլանավորման և անհատականացման ընթացքում:

7. Խրախուսել երեխային՝ նպաստելով նրա առաջընթացին, զարգացմանը, ինքնավարությանը և հնարավորությունների լիարժեք բացահայտմանը:

8. Դաստիարակը երեխայի գործունեության ակտիվ մասնակիցն է՝ օգնականը: Երեխայի հետ խաղալով, շփվելով, ապրել նրա հետ՝ ստեղծելով ազատ միջավայր և զարգացման ու ինքնադաստիարակման հնարավորություն:

9. Հարգել երեխայի ազատությունը, արժանապատվությունը, կարծիքը, ընձեռնում է ընտրության հնարավորություններ:

10. Երեխաների մեջ զարգացնել հմտություններ, որոնք նպաստում են երեխայի ինքնուրույնությանը, անկաշկանդ, անվտանգ գործողություններին, դիմացինին լսելու և նրա կարծիքը հարգելու ունակությունների ձևավորմանն ու զարգացմանը:

11. Նպաստել երեխայի ստեղծագործական երևակայության զարգացմանը:[2]

Դաստիարակը կազմակերպում է երեխաների օրվա ռեժիմը և ժամանակը: Դաստիարակը մշտապես գտնվում է երեխաների կողքին, լինի խմբասենյակ, զբոսանքի, քնի, ճաշի ժամանակ: Դաստիարակը պետք է ուսումնական պարապունքները պլանավորի ժամանակակից ու նորարարական մեթոդներով:

Մեթոդը նպատակին հասնելու միջոց է: Այն գործիք է դաստիարակի համար իր կրթադաստիարակչական նպատակներին հասնելու համար: Նախադպրոցական կրթության դիդակտիկայում լայն տարածում են գտել ուսուցման ժամանակակից մեթոդները՝ խաղային, գործնական, ակտիվ ուսուցման, որոնք հայտնի են ինտերակտիվ կամ փոխգործուն մեթոդներ:

Խաղային մեթոդների առավելությունները պայմանավորված են խաղային մթնոլորտի հուզականությամբ: Խաղի բոլոր տեսակները ուսուցանել են և կատարում են երկու կարևոր գործառույթ՝

- նպաստում են գիտելիքների ամրապնդմանն ու խորացմանը,
- խթանում են նոր գիտելիքների արդյունավետ յուրացմանը:

Ուսուցման գործնական մեթոդներից են՝ վարժությունները, փորձերը, հետազոտություններն ու մոդելավորումը: Ուսուցման փոխգործուն մեթոդները համապատասխանում են երեխայակենտրոն ուսուցման սկզբունքներին:

Փոխգործուն ուսուցման սկզբունքներն են՝

[2] 3-6 տարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակերպումը այլընտրանքային մոդելներով.pdf (unicef.org)

- փոխազդեցությունը, փոխուսուցումը,
- երեխայի ակտիվությունը,
- համագործակցությունը,
- ինքնարտահայտման խրախուսումը,
- հետադարձ կապը:

Փոխգործուն մեթոդներն ունեն նաև առանձնահատկություններ՝

- երեխայի իմացական գործընթացների կազմակերպումը,
- հետաքրքրությունների բացահայտումը,
- համագործակցային կարողությունների զարգացումը,
- անհատական առանձնահատկությունների բացահայտումը,
- հաղորդակցական ունակությունների ձևավորումը,
- տրամաբանական մտածողության զարգացումը,
- ինքնուրույնության խրախուսումը,
- վերլուծական կարողությունների ձևավորումը:

Քանի որ խաղը երեխայի աշխատանքն է, որի ընթացքում նա ձեռք է բերում կարևոր հմտություններ, հետևաբար դաստիարակը պետք է երեխայի օրվա խաղային հատվածը դիտարկի որպես ուսումնական ծրագրի կարևոր մաս: Երեխաները պետք է խաղան իրական առարկաներով և բնական իրավիճակներում, մինչև կհասկանան տառերի, թվերի նշանակությունն ու իմաստը:

Իսկ փոքր խմբով ուսուցումն ունի հետևյալ առավելությունները՝

- զարգանում է խնդիրները լուծելու կարողությունը,
- հաղորդակցման հմտություններ է ձևավորվում,
- երեխաները սովորում են միմյանցից,
- զարգանում է երեխայի պատասխանատվության զգացումը,
- խթանում է թիմային աշխատանքը,

- ապահով և նպաստավոր միջավայր է ստեղծում գիտելիքներն ու հմտությունները դրսևորելու համար,
- ընձեռնում է ակտիվ մասնակցության և ինքնադրսևորման հնարավորություն:

Երեխաների մասնակցությունը և ներգրավումն ապահովելու մտածողությունը խթանելու և սովորելու հմտությունները զարգացնելու համար կարևոր դեր ունեն առաջադրվող հարցերը դաստիարակի կողմից: Առաջադրվող հարցերը պետք է լինեն՝

- հստակ,
- նպատակաուղղված,
- հակիրճ,
- տեղին,
- երեխաների մակարդակին համապատասխան,
- տրամաբանական հաջորդականությամբ,
- մտածելու տեղիք տվող:

Ուսուցման ընթացքում կարևոր է կիրառել երեխայի մտածողությունը խթանող հարցեր, որոնց անվանում են բաց հարցեր: Բաց հարցերը երեխային տալիս են ազատ մտածելու, հարցերը իրենց տեսանկյունից դիտարկելու և կարծիք հայտնելու հնարավորություն: Փակ հարցերի ժամանակ պատասխանը լինում է սահմանափակ, հակիրճ, մեկ ճիշտ պատասխան, որով դաստիարակը ստուգում է երեխայի հիշողությունը: Այս ամենի շնորհիվ էլ երեխան ունենում է հստակ, կապակցված բանավոր խոսք, ձևավորվում է հաղորդակցվելու կարողությունը: Նախադպրոցականի մոտ կապակցված խոսք և հաղորդակցվելու կարողություն ձևավորելու կարևորությունը սահմանված է նաև նախադպրոցական կրթության պետական չափորոշչով[3], հետևաբար դաստիարակը պետք է ուշադրություն դարձնի երեխաների լեզվական և հաղորդակցական կարողության զարգացմանը, ինչի

[3] arlis.am/documentview.aspx?docid=152575

հետևանքով էլ երեխան տիրապետում է գրական հայերենին: Երեխան ունակ է լինում կողմնորոշվել լեզվական միավորներում՝ հնչյուն, բառ, նախադասություն, ունի տարրական պատկերացումներ վանկի և տառի մասին, ինքնուրույն ձևակերպում է սեփական մտքերը՝ ազատ և կապակցված արտահայտելով կարծիք, վերաբերմունք որևէ երևույթի մասին:

Ի վերջո, նախադպրոցականի արդյունավետ կրթությունն ու զարգացումը մանկապարտեզում կախված է դաստիարակի մարդկային, մասնագիտական որակներից: Դաստիարակը պետք է վստահ լինի և հավատա, որ ունի բավական հմտություններ և կարողություններ սովորեցնելու բոլոր երեխաներին:

Ինչպես ասել է իտալացի մանկավարժ Մարիա Մոնտեսորին՝ «երեխային հաճախ քաջալերելու դեպքում նա սովորում է լինել ավելի ինքնավստահ: Երեխայի հետ շփվելիս եղեք որքան հնարավոր է դրական: Առաջարկեք նրան լավագույնը, ինչ կա աշխարհում»:

Կարևոր է մշակել և ստեղծել այնպիսի մոտեցումներ, որոնք կիրառելի են և աշխատում են անհատապես բոլոր երեխաների համար, այլ ոչ թե «որոշ» կամ «հիմնականում բոլոր» սովորողների համար:

1.2 Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված ինը կարողունակությունների և ոլորտների անհրաժեշտությունը

Կարողունակությունները նախադպրոցական տարիքի երեխաների կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, հմտությունների, արժեքների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ պատշաճ արձագանքելու ձևեր են:

Նախադպրոցականի տարիքի երեխաների կարողունակությունները ձևավորվում են ուսուցման և դաստիարակության կազմակերպման միջոցով: Չափորոշչի հանդիսանում է երեխայակենտրոն կրթության հիմքը, հնարավորություն է ընձեռնում արձագանքելու երեխաների կարիքներին և հետաքրքրություններին, հարգելու յուրաքանչյուր երեխայի անձը, խթանելու համատեղ ուսումնառության գործընթացը: Նախադպրոցական կրթությունը երեխայի մոտ զարգացնում է իմացական ոլորտը և ձևավորում է առանցքային կարողունակություններ: Նախադպրոցական կրթության կրթական չափորոշչում հստակ սահմանված են նախադպրոցական տարիքի երեխաների ակնկալվող կարողունակությունները:

Ծրագրային բոլոր բաղադրիչներով սահմանված վերջնարդյունքներն ուղղված են առանցքային կարողունակությունների ձևավորմանն ու զարգացմանը՝

- լեզվական և հաղորդակցական կարողունակություն,
- ճանաչողական և մոտիվացիոն կարողունակություն,
- ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն,
- ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն,
- թվային և մեդիա կարողունակություն,
- մշակութային կարողունակություն,
- մաթեմատիկական և տեխնիկական կարողունակություն,
- տնտեսական կարողունակություն,
- ֆիզիկական կարողունակություն:

Կարողունակություններն ունեն ոլորտային ուղղվածություն:

Նախադպրոցական կրթական ծրագրով սահմանված մակարդակը ապահովվում է կրթության բովանդակային բաղադրիչների միջոցով, որոնք իրականացվում են ըստ տարիքային խմբերի և յուրաքանչյուր երեխայի զարգացման առանձնահատկությունների ու կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի, երեխաների գիտելիքների, կարողություններիր ու

հմտությունների ձևավորմամբ՝ այդ տարիքի երեխաների առանձնահատկություններին, զարգացման ոլորտներին և ուղղություններին համապատասխան:

Նախադպրոցական տարիքի երեխաների կրթական ծրագրի բովանդակությունը ներառում է զարգացման հետևյալ ոլորտները՝

- շարժողական ոլորտ (Շ)
- խոսքի և հաղորդակցական ոլորտ (ԽՀ)
- հուզական, սոցիալ-անձնային ոլորտ (ՀՍԱ)
- իմացական ոլորտ (Ի)
- ինքնասպասարկման, անվտանգության, առողջ ապրելակերպի ոլորտ (ԻԱԱ)

Երեխաների ինտեգրումը սոցիալական միջավայրին ապահովելու համար նախադպրոցական մանկավարժական աշխատողները պետք է կիրառեն ժամանակակից մեթոդները:

1.3 Ուսումնական գործընթացի պլանավորման անհրաժեշտությունը

Նախադպրոցական հաստատությունում դաստիարակները պետական չափորոշիչների, ծրագրի նպատակների, երեխաների անհատական պահանջների վրա հիմնված պլաններ են մշակում և սխեմատիկ մոտեցումներ են կիրառում երեխաների առաջադիմությունը դիտարկելու և գնահատելու համար: Ուսուցումը պահանջում է դասավանդման պլաններ, որոնք հիմնված են յուրաքանչյուր երեխայի մասին ունեցած տեղեկությունների վրա, և մտածված կերպով մշակված են ծրագրային նպատակները, անհատների կամ խմբերի հետաքրքրությունները և կարողությունները արտացոլելու նպատակով:

Արդյունավետ պլանավորող կարող է համարվել այն դաստիարակը, որը՝

- երկարաժամկետ և կարճաժամկետ պլաններ է մշակում,
- խմբասենյակի բազմազանությանը հարմարվող տարատեսակ պարապունքներ է պլանավորում,
- հարկ եղած դեպքում պատրաստ է փոփոխություններ մտցնել ընդունված ռեժիմի մեջ,
- կանոնավոր կերպով դիտարկում, արձանագրում և փաստագրում է երեխաների առաջընթացը,
- կրթական ծրագրերը հիմնվում է հավաքած տեղեկությունների վրա:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունում շատ անհրաժեշտ է ուսումնական գործընթացի պլանավորումը: Պլանավորման մեջ հստակ նշվում է նպատակը, խնդիրները, ակնկալվող վերջնարդյունքները, մեթոդները, անհրաժեշտ նյութերը: ՆՈՒՀ մանկավարժի աշխատանքը դառնում է պլանավորված ու կանոնակարգված: Պլանավորումը թույլ է տալիս մանկավարժին, որպեսզի նա գտնի ուսուցման նյութին համապատասխանող խթանիչ միջոցներ՝ հետաքրքիր անցկացնելու պարապունքը: Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժը պետք է պարապունքները պլանավորի նախադպրոցական կրթական չափորոշչին, չափորոշչային ոլորտներին և կարողունակություններին համապատասխան:

Ինտեգրված ուսուցման ժամանակ պարապունքները պլանավորում ենք մի քանի մանկավարժներ: Ինտեգրված ուսումնական պարապունքները նպաստում են նախադպրոցականի բազմակողմանի զարգացմանը:

Պլանավորման ժամանակ նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժը պետք է համագործակցի երաժշտության մանկավարժի, հատուկ մանկավարժի, պարուսույցի, հոգեբանի, սոցմանկավարժի հետ: Այս համագործակցությունը կարևոր է հատկապես կրթության առանձնահատուկ

պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաների առկայության դեպքում: Համագործակցությունը շատ կարևոր դեր է ունենում ԱՈՒՊ-ի կազման համար: Մանկապարտեզում ամենակարևոր նախապայմաններից է այն, որ տիրի խաղաղ մթնոլորտ: Մանկապարտեզի կրթադաստիարակչական գլխավոր գործոնը դաստիարակինն է:

Գլուխ 2. Գործնական աշխատանք

2.1 Դաստիարակի աշխատանքի մեկշաբաթյա պլանավորում

Թեմա՝ Ձմեռ

Անհրաժեշտ նյութեր՝ A4 թուղթ, մկրատ, սոսինձ, գունավոր մատիտներ,տոնածառի, ձնեմարդի, փաթիլների նկարներ

Պատրաստման եղանակը՝ կտրատել, սոսնձել, նկարել, գունավորել

Նպատակը՝

- կարողանան թվարկել տարվա եղանակները՝ յուրաքանչյուրն իր ամիսներով,
- կսովորեն ձմռանը վերաբերվող հետևյալ նոր բառերը՝ սաստիկ, խստաշունչ, սառնամանիք,
- կզարգացնեն ձմռան հետ կապված գիտելիքները,
- կիմանան, որ ձմռանը նշում ենք Ամանորը և Սուրբ Ծնունդը,
- կսովորեն Հ. Թումանյանի «Առաջին ձյունը» բանաստեղծությունը:

Խնդիրները՝

- կկարողանան նկարել եղեևնի, փաթիլներ,
- կկարողանան երկրաչափական պատկերներով (շրջաններով և եռանկյուններով) ձնեմարդ պատրաստել (ապլիկացիա)
- կկատարեն դիտարկումներ ձմռան և Ամանորի վերաբերյալ:

Վերջնարդյունքներ՝

- կսովորեն նոր բառեր և կհարստացնեն բառապաշարը,
- կիմանան և կամրապնդեն տարվա ամիսները,
- կկարողանան նկարագրել ձմեռը և ձմռան երևույթները,

- կիմանան, որ ձմռանն ենք նշում Ամանորը և Սուրբ Ծնունդը և հյուր են գալիս Ձմեռ պապն ու Ձյունանուշը,
- կկարողանան համեմատել տարվա եղանակները,
- կզարգանա երեխաների հիշողությունը և ստեղծագործական միտքը:

ԳՈՒՍ

Գիտենք, որ ձմեռանը նշում ենք Ամանորը և հյուր է գալիս Ձմեռ պապը:

Ուզում ենք իմանալ, թե ինչու՞ են ձմռանը թռչունները չվում:

Սովորեցինք, որ ցրտին թռչունները չվում են տաք երկրներ և գարնանը վերադառնում:

Օրվա երկրորդ կես՝

1. Ստեղծագործական պատմում՝ «Նոր տարի»
2. Խաղ՝ ձնագնդիկ,
3. Բեմադրություն՝ «Թատրոն ձեռքերի վրա»
4. Մուլտֆիլմի դիտում՝ «Սպիտակաձյունիկն ու յոթ թզուկները»:

Ակնկալվող կարողունակությունը ՝

- ➢ լեզվական և հաղորդակցական կարողունակություն
- ➢ ճանաչողական և մոտիվացիոն կարողունակություն
- ➢ ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
- ➢ մշակութային կարողունակություն
- ➢ մաթեմատիկական և տեխնիկական կարողություն
- ➢ ֆիզիկական կուլտուրայի կարողունակություն:

Կապը ՀՊՁ -ի ոլորտների հետ ՝ Շ, ԽԾ, Ի, ՀՍԱ

2.2 Տնօրենի դիտարկումներ

Թեման՝ Ձմեռ, Ամանոր

Ժամկետ՝ տասնօրյա

N	Ստուգման բովանդակությունը	Ստուգման կազմակերպման մեթոդիկան
1	Կրթադաստիարակչական կրթական համալիր ծրագրին համապատասխան՝ • Ստուգել բառապաշարի հարստացման, կատարելագործման, խոսքի հնչյունային, քերականական կապակցված խոսելու, զրուցելու, վերապատմելու կարողությունը: • Ստուգել իրավիճակային հարցեր ձևավորելու և կիրառելու, առարկաները համեմատելու, խմբավորելու կարողությունը	Ստուգումն իրականցվեց դիտարկման և հարց ու պատասխանի մեթոդներով: Դիտարկման արդյունքում պարզ դարձավ, որ սաների մոտ լավ պատկերացում է կազմվել ձմռան վերաբերյալ, ավելի մեծ հետաքրքրություն է ձևավորվել մանկապարտեզում կազմակերպվող միջոցառումների նկատմամբ, սաների մեջ ավելի ամուր կապ է ձևավորվել:
2	Ելնելով համալիր ծրագրի պահանջներից՝ ստուգել դաստիարակների կողմից ընտրված մեթոդների և հնարների ճիշտ ընտրությունը	Դաստիարակն ընտրել էր հետաքրքիր մեթոդիկա, մոտեցումներ և ուներ բավականին գիտելիքներ ընտրված թեմայի վերաբերյալ:
3	Ստուգել աշխատանքի պլանավորման համակարգը	Ըստ դաստիարակի աշխատանքի պլանավորման գրառումների:
4	Ստուգել աշխատանքի կենտրոնների հագեցվածությունը և ուսուցման ընթացքում կիրառված դիդակտիկ նյութերը	Դաստիարակն օրվա յուրաքաչնյուր հատվածի համար առանձնացրել էր դիդակտիկ նյութեր, ներգրավող խաղեր և ուսուցողական նյութեր:
5	Դիտարկել ծնողների հետ տարվող աշխատանքները	Անահատական զրույցներ ծնողների հետ

Եզրակացություն

Ուսումնասիրելով մակապարտեզի մանկավարժի աշխատանքի կազմակերպման համար նախատեսված առկա չափորոշիչները և մեթոդները՝ կարող ենք առանձացնել հետևյալ եզրահանգումները՝

- Մանկապարտեզի մանկավարժի աշխատանքի կազմակերպման գործում առանցքային դեր ունեն առկա չափորոշիչների համապատասխան գործունեություն ծավալելը, քանի որ այն թույլ է տալիս նաև ժամանակի փոփոխությունների հետ առաջ գնալ և ներդնել նոր մեթոդիկա:
- Աշխատանքի կազմակերպման գործընթացում մեծ ներդրում ունի նաև ծնողը և անհրաժեշտ է չափորոշիչների կարևոր դրույթների հետ ծանոթացնել նաև ծնողներին՝ առավել մեծ վստահություն և երեխայի դաստիարակման գործում մասնակցություն ապահովելու համար:
- Հաշվի առնելով նորագույն տեխնոլոգիաների նկատմամբ փոքր տարիքից հետաքրքրվածությունը՝ արդյունավետ է ՏՀՏ ներդնումը աշխատանքի կազմակերպման գործընթացում:

Օգտագործված գրականության ցանկ

1. «ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. 3-6 տարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակերպումը այլընտրանքային մոդելներով.pdf (unicef.org)